ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ անդամակցելու «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանը:
2. Սահմանված կարգով Երևան համայնքի բյուջեում նախատեսել «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպության անդամության վճարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

«__»_____ 2024թ.

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Բնության պահպանության միջազգային միությունը» միջազգային ոչ առևտրային բնապահպանական կազմակերպություն է, որը զբաղվում է երկիր մոլորակի կենսաբազմազանության պահպանման խնդիրների լուսաբանմամբ:

Կազմակերպության նպատակն է աշխարհի բոլոր կազմակերպություններին տրամադրել աջակցություն և օգնություն՝ պահպանելու բնության ամբողջականությունն ու բազմազանությունը, բնական պաշարների բանական և էկոլոգիապես կայուն օգտագործման ապահովումը:

«Բնության պահպանության միջազգային միությունը» իրականացնում է բնապահպանական մոնիթորինգ, բնության պահպանության պահանջների, գործողությունների ծրագրերի մշակում, տեղեկատվության տարածում, խորհրդատվության տրամադրում: Գլխավորում է միջազգային կարմիր և կանաչ գրքերի կազմման ու հրատարակման աշխատանքները: Կազմակերպությունն ունի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի դիտողի կարգավիճակ:

Բնապահպանական մարտահրավերները լուծելու և կայուն զարգացման հասնելու նպատակով Երևանի քաղաքապետարանն անդամակցության հայտ է ներկայացրել «Բնության պահպանության միջազգային միությանը»:

Հիմք ընդունելով վերը նշվածը, Երևան քաղաքի ավագանու համաձայնեցման է ներկայացվում ««Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանն անդամակցելուն համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ